**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

---

ք.Երևան « 23 » մարտի 2021թ.

# ՀՐԱՄԱՆ № 083-Ա

## ԱՐՄԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ՊԱՇՏՈՆԻ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 41-Մ2-2) ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ, 151-րդ կետերը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գնումների մասնագետի (պաշտոնի ծածկագիր՝ 41- Մ2-2) թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հարցազրույցն անցկացնող հանձնաժողովի 2021թվականի մարտի 19-ի եզրակացությունը և Արման Պողոսյանի դիմումը.

***ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝***

1. Արման Վարդանի Պողոսյանին նշանակել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գնումների մասնագետի պաշտոնին (պաշտոնի ծածկագիր՝ 41-Մ2-2)։
2. Փորձաշրջանի ընթացքում Արման Պողոսյանի փորձաշրջանի համակարգող նշանակել Հանձնաժողովի գլխավոր հաշվապահ(պաշտոնի ծածկագիր՝ 41-Մ1-1)՝ Արման Խաչատրյանին։
3. Արման Վարդանի Պողոսյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ

զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան :

4. Աշխատանքի անցնելու սկիզբը՝ 2021թվականի մարտի 24:

**Պարտականությունները կատարող Ս.Հովակիմյան**